**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**
**ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ**
**МЭР ГОРОДА СЕВАНА**

---

1501, ք. Սևան, Նաիրյան փ. 164
հեռ. (0261) 2-43-23
էլ. փոստ sevanhamaynq@mail.ru

1501, г. Севан, ул. Наирян 164
тел. (0261) 2-43-23
Эл. почта sevanhamaynq@mail.ru


21/01/2013թ.

N քպ 1/30

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ուղարկվում է Սևան համայնքի ավագանու՝ 25.12.2012թ. թիվ 5 և 17.01.2013թ. թիվ 1 նիստերի որոշումները:

Առդիր՝ 32 թերթ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

[illegible]
[illegible]
14. 02 2013թ.
Մուտք թիվ 29/762-13

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 47-Ա

## ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ, 32-րդ հոդվածի 1-ին մասերով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն թիվ 1 հավելվածի / *կցվում է* /:
2. Հաստատել Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի / *կցվում է* /:
3. Սևանի քաղաքապետին՝ Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ, ավելացում կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
4. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ավագանու՝ 09.12.2011թ. թիվ 5 նիստի թիվ 39-Ա «Սևան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումը:

5. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 4-րդ կետերն ուժի մեջ են Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ, ավելացում կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻՁԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված N1
Սևան համայնքի ավագանու
25.12.2012թ. թիվ 5 նիստի թիվ 47-Ա որոշման

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. քաղաքապետ
2. քաղաքապետի տեղակալ / փոխքաղաքապետ /
3. աշխատակազմի քարտուղար
4. քաղաքապետի խորհրդական
5. քաղաքապետի օգնականներ
6. ֆինանսատնտեսագիտական բաժին
7. կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
8. առևտրի, սպասարկումների և բյուջեի եկամուտների գանձումների բաժին
9. համայնքի զարգացման ծրագրերի և գնումների բաժին
10. ճարտարապետա-շինարարական բաժին
11. ներքին աուդիտի բաժին
12. քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սևանի տարածքային բաժին
13. քաղաքապետարանի աշխատակազմ
14. տեխնիկական-սպասարկող անձնակազմ

Հավելված թիվ2
Սևան քաղաքային համայնքի ավագանու
25.12.2012թ.
թիվ 5 նիստի թիվ 47-Ա որոշմամբ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 54
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հազար դրամ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծածկագիր | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ / | Բարձր լեռնային | Ընդամենը | Տարեկան |
|---|---|---|---|---|---|---|
| ***ՔԱՂԱՔԱՊԵՏ*** | | 1 | 265.0 | 8.0 | 273.0 | 3276.0 |
| ***ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ /ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ/*** | | 1 | 140.0 | 8.0 | 148.0 | 1776.0 |
| ***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ*** | 1.1-1 | 1 | 130.0 | 8.0 | 138.0 | 1656.0 |
| ***ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ*** | | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ | | 1 | 75.0 | 8.0 | 83.0 | 996.0 |
| | | 1 | 75.0 | 8.0 | 83.0 | 996.0 |
| | | 1 | 50.0 | 8.0 | 58.0 | 696.0 |
| ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ*** | | 36 | | | | 26136.0 |
| | | | | | | |
| ***ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ*** | | 5 | | | | 4704.0 |
| ԲԱԺՆԻ ՊԵՏ - ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ | 2.1-1 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ - ՀԱՇՎԱՊԱՀ | 2.3-1 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ - ՀԱՇՎԱՊԱՀ | 3.1-1 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-2 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ-ԳԱՆՁԱՊԱՀ | 3.2-1 | 1 | 50.0 | 8.0 | 58.0 | 696.0 |
| | | | | | | |
| ***ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ*** | | 5 | | | | 3312.0 |
| ԲԱԺՆԻ ՊԵՏ | 2.1-2 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-3 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-4 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-3 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-4 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| | | | | | | |
| ***ԱՌԵՎՏՐԻ , ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ*** | | 5 | | | | 4008.0 |
| ԲԱԺՆԻ ՊԵՏ | 2.1-3 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-5 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-6 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.2-2 | 1 | 50.0 | 8.0 | 58.0 | 696.0 |
| ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.2-5 | 1 | 50.0 | 8.0 | 58.0 | 696.0 |
| | | | | | | |
| | | | | | | |
| ***ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ*** | | 5 | | | | 4704.0 |
| ԲԱԺՆԻ ՊԵՏ | 2.1-4 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-8 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-8 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-9 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.2-7 | 1 | 50.0 | 8.0 | 58.0 | 696.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| *ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ* | | 6 | | | | 4128.0 |
| ԲԱԺՆԻ ՊԵՏ | 2.1-5 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-10 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-14 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-11 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-12 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-13 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| | | | | | | |
| *ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ* | | 2 | | | | 2256.0 |
| ԲԱԺՆԻ ՊԵՏ | 2.1-6 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ԱՈՒԴԻՏՈՐ | 3.1-17 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| | | | | | | |
| *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ / ՔԿԱԳ / ՄԵԿԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ* | | 2 | | | | 2136.0 |
| Բաժնի պետ | 1.3-1 | 1 | 112.0 | 8.0 | 120.0 | 1440.0 |
| Առաջին կարգի մասնագետ | 3.2-9 | 1 | 50 | 8.0 | 58.0 | 696.0 |
| | | | | | | |
| *ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ* | | 5 | | | | 3624.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ - ԻՐԱՎԱԲԱՆ | 2.3-11 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-12 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 2.3-13 | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-14 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ | 3.1-15 | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| | | | | | | |
| *ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | 12 | | | | 8962.8 |
| ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ | | 1 | 60.0 | 8.0 | 68.0 | 816.0 |
| ԳՈՐԾԱՎԱՐ | | 1 | 50.0 | 8.0 | 58.0 | 696.0 |
| ՏՆՏԵՍՎԱՐ-ՊԱՐԵՏ | | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ՎԱՐՈՐԴ | | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ԷԼԵԿՏՐԻԿ-ՓԱԿԱՆԱԳՈՐԾ | | 1 | 70.0 | 8.0 | 78.0 | 936.0 |
| ՊԱՀԱԿՆԵՐ | | 4 | 48.0 | 8.0 | 56.0 | 2688.0 |
| ՀԱՎԱՔԱՐԱՐՆԵՐ | | 3 | 46.3 | 8.0 | 54.3 | 1954.8 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | 54 | | | | 43282.8 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 48-Ն

## 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո.Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա. Հաստատել համայնքի 2013թ. տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

*Հիմնական օբյեկտների համար*

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 4500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 9000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ -21000 դրամ.

*Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար*

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 900 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն - 900 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է - 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 10 000 դրամ.
   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 10 000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար - 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 75.000 դրամ

3) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10 000 դրամ.

5.1.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 50 000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար - 50 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 100 000 դրամ.
գ) բաղնիքների ( սաունաների) համար - 250 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար - 1 000 000 դրամ.
ե) վիճակախաղերի կազմակերպման համար - 100 000 դրամ.

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 0 դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 2 000 դրամ.
բ) թունդ ալկոհալային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս ) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 3 500 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար - 1 500 դրամ.
դ) դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ( բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 5 000 դրամ.

Բ. Հաստատել համայնքի 2013թ. տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու, հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար - 5000դրամ

2. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 0 դրամ:

3. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդների հետ կապված մասնակիցների վճար - 3000 դրամ:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 49-Ա

### «ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով, 52-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել ««Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն / այսուհետ՝ ՀՈԱԿ / ստեղծելու թույլտվության մասին» քաղաքապետի՝ 25.12.2012թ. թիվ 665-Ա որոշումը:

2. Հաստատել «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը:

3. «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի գործունեության առարկան, նպատակները և գործունեության տեսակներն են՝

   3.1. Կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման, բարեկարգման աշխատանքների իրականացում, աբոնենտային վճարների գանձման կազմակերպում, թափառող կենդանիների ոչնչացման ծառայությունների իրականացում:

3.2. Արտաքին լուսավորության և անձրևաջրատար ցանցերի ընթացիկ նորոգում, պահպանում, շահագործում.

3.3 Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացում.

3.4 Օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացում:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 50-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սահմանել համայնքի տարածքում աղբահանության վճարների հետևյալ դրույքաչափերը՝

*1.1 Կենցաղային աղբի համար՝*

1.1.1 Բնակելի շենքերում փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի հաշվով - ամսական 200 դրամ.

1.1.2 Առևտրի / այդ թվում՝ շուկաների /, հանրային սննդի և բնակչությանը սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով - ամսական 1քմ 70 դրամ.

1.1.3 Հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների համար - ամսական 1քմ 30 դրամ.

1.1.4 Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - ամսական 1քմ 8 դրամ.

1.1.5 Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային և նմանատիպ այլ հասարակական շինությունների համար - ամսական 1քմ 4 դրամ.

1.1.6 Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով, բայց ոչ ավելի - 1քմ 70 դրամից.

1.1.7. Ափամերձ տարածքներում տարեկան 3 ամսվա հաշվարկով հետևյալ դրույքաչափերով՝

- յուրաքանչյուր ժամանակավոր կառույցի / տնակ / համար ամսական - 1000 դրամ
- յուրաքանչյուր հիմնական կառույցների համար / որոնք չեն դասվում վերևում թվարկված օբյեկտների շարքում / ամսական - 2000 դրամ
- միայն հողամաս կամ ծածկավրան ունեցող տարածքների հաշվով ամսական - 5 դրամ՝ յուրաքանչյուր 1քմ համար:

*1.2 Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափ աղբի համար՝*

1.2.1 Ըստ ծավալի՝ 1խմ աղբի համար - առավելագույնը՝ 2000 դրամ.

1.2.2 Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար - առավելագույնը՝ 8000 դրամ:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԲԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 51-Ա

## ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի** 19, **19.1 կետերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ** օրենքի **պահանջներով՝**

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

**Հաստատել Սևան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:**

/ կցվում է /:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված
Սևան համայնքի ավագանու՝
2012 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 51-Ա որոշման

# Կ Ա Ր Գ

# ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԳԱՆՁՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Սևան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման <u>հետ</u> կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Սևան համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

## II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:
5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:
6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և (կամ) Սևան համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները):

## III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝
   1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,
   2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Սևան համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:
8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝
   1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 70 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 30.72 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ - 70 դրամ),
   2) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 30 դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 83.3քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ - 30 դրամ),
   3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 8դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 312.5քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ -8 դրամ),
   4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 4դրամ (հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 625.0քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1 քմ - 4դրամ),
   5) 1.1.7. Ափամերձ տարածքներում տարեկան 3 ամսվա հաշվարկով հետևյալ դրույքաչափերով՝
   - յուրաքանչյուր ժամանակավոր կառույցի / տնակ / համար ամսական - 1000 դրամ
   - յուրաքանչյուր հիմնական կառույցների համար / որոնք չեն դասվում վերևում թվարկված օբյեկտների շարքում / ամսական - 2000 դրամ
   - միայն հողամաս կամ ծածկավրան ունեցող տարածքների հաշվով ամսական - 5 դրամ՝ յուրաքանչյուր 1քմ համար:

բ) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

Օրինակ 1. Նաիրյան փողոց թիվ 10 շենքի թիվ 50 բնակարանում բնակվում է 6 բնակիչ, սակայն բնակիչներից մեկը՝ 2012 թվականի մարտ ամսից մինչև հուլիս ամիսը ներառյալ, փաստացի չի բնակվելու տվյալ բնակարանում:

Վերոգրյալ բնակարանի վճարը՝ 2012 թվականի մարտ ամսից մինչև հուլիս ամիսը ներառյալ, կհաշվարկվի 5 անձի համար, որը կկազմի 1000 դրամ:

Օրինակ 2. Սեփականության իրավունքով «ԷԼԵԳԱՆՏ» ՍՊԸ-ին պատկանող, Պողոսյան փողոց թիվ 25 հասցեում գտնվող շինությունում իրականացվում է բազմաբնույթ տնտեսական գործունեություն: Շինության տարբեր հատվածներում գործում են հացի արտադրամաս, առևտրի սրահ և գրասենյակ: Աղբահանության վճարը՝ ամբողջ մակերեսի համար, հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով, որպես առևտրի սրահ և գրավոր ծանուցվում շինության սեփականատիրոջը, պահանջելով վճարի վերահաշվարկի և համապատասխան ճշգրտման նպատակով ներկայացնել տեղեկություններ՝ ըստ մակերեսի փաստացի իրականացվող գործունեության վերաբերյալ: Վճարի վերահաշվարկը կատարվում է ճշգրտված տեղեկությունների ներկայացման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

## IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում են Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և (կամ) Սևան համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված օպերատորի կամ այլ կազմակերպության (կազմակերպությունների) կողմից (այսուհետ՝ գանձող):
10. Գանձողը ստանում է Սևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Սևանի քաղաքապետի կողմից լիազորված մարմնի (այսուհետ՝ համակարգող) և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:
11. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:
12. Գանձողը համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:
13. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16:00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան: Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:00-ն:
14. Սևան քաղաքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված օպերատորը կամ այլ կազմակերպությունը (կազմակերպությունները) Սևանի քաղաքապետին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

## V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

## VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Սևանի քաղաքապետի կողմից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 52-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածների պահանջներով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համայնքի 2012թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝ սանիտարական մաքրման և ձնահեռացման ծախսեր / բաժին 05, խումբ 1, դաս 1, հոդված 4213 /, ավելացնել 2000.0 հ. դրամ, հաստատել տարեկան 50500.0 հ. դրամ:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ, որից նպաստներ բյուջեից / բաժին 10, խումբ 7, դաս 1 հոդված 4729 /, պակասեցնել 2000.0 հ. դրամ հաստատել տարեկան 14000.0 հ. դրամ:
3. Հաստատել համայնքի 2012թ. ճշտված բյուջեի թիվ 2, 3, 6 հատվածները:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 53-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջների,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Սևան համայնքի 2013թ. բյուջեի նախագիծը՝

| | |
|---|---|
| - Վարչական բյուջեի եկամուտներ՝ | 450000.0 հազ. դրամ |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 450000.0 հազ. դրամ |
| -Դեֆիցիտը՝ /պակասուրդը/՝ | 0.0 հազ. դրամ |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ՝ | 154000.0 հազ. դրամ |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | 154000.0 հազ. դրամ |
| -Դեֆիցիտը՝ (պակասուրդը)՝ | 0.0 հազ. դրամ |

ԸՆԴԱՄԵՆԸ

| | |
|---|---|
| ա ) եկամուտների գծով ՝ | 604000.0 հազար դրամ |
| բ) ծախսերի գծով ՝ | 60400.0 հազար դրամ |
| գ) դեֆիցիտը (պակասուրդը)՝ | 0.0 հազար դրամ: |

2. Հաստատել համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե ՝ 46000.0 հազ. դրամ

3. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.

5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի

6. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի

7. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի

8. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.

9. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված ծախսերի հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 54-Ա

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՈՒ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջների՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Թույլատրել՝ վարձակալության հանձնելու

✓ համայնքային սեփականության բնակելի տարածքները
Սահմանել տարեկան վարձավճար 1քմ - 200 դրամ:

✓ համայնքային սեփականության ոչ բնակելի տարածքները :
Սահմանել տարեկան վարձավճար 1քմ - 1000 դրամ:

Գագարինում սահմանել տարեկան վարձավճար 1քմ - 200 դրամ:

✓ համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական և նկուղային տարածքները՝
Սահմանել տարեկան վարձավճար 1 քմ - 200 դրամ:

2. 2013թ. համար համայնքի վարչական տարածքի սահմաններում սահմանել հողօգտագործման և կառուցապատման վճարների հետևյալ դրույքաչափերը՝

- Աբովյան փողոցից մինչև Շինարարների փողոցը ընկած Նաիրյան փողոցի վրա տեղադրվող օբյեկտների 1 քմ հողօգտագործման համար՝ կառուցապատման վճար տարեկան - 400 դրամ.

- քաղաքի մնացած տարածքներում տեղադրվող օբյեկտների համար վճար 1քմ՝ տարեկան - 300 դրամ.

- Ցամաքաբերդ և Գոմաձոր թաղամասերի, Գագարին գյուղի օբյեկտների համար՝ 1քմ-տարեկան - 150 դրամ.

- ավտոլցակայանների համար՝ յուրաքանչյուր 1քմ հողատարածքի համար՝ տարեկան վճար - 150 դրամ.

- ավտոտնակների համար՝ յուրաքանչյուր 1 քմ համար՝ տարեկան վճար 150 դրամ.

- բացօթյա սրճարաններ կազմակերպելու համար՝ 1քմ հողօգտագործման, կառուցապատման վճար՝ տարեկան - 150 դրամ.

- գոյություն ունեցող հասարակական և արտադրական շինությունների սպասարկման համար տրամադրվող հողերի կառուցապատման վճար սահմանել 1 քմ համար տարեկան - 30 դրամ.

- ավտոկայանատեղերի համար, յուրաքանչյուր 1 քմ համար՝ հողօգտագործման վճար սահմանել տարեկան - 130 դրամ.

- գյուղատնտեսական շուկաներ կազմակերպելու համար հողօգտագործման վարձավճար 1 քմ հաշվով՝ տարեկան - 120 դրամ.

- բացօթյա տոնավաճառներ կազմակերպելու համար հողօգտագործման վարձավճար 1 քմ համար տարեկան - 100 դրամ.

- առափնյա հանգստի գոտիներ կազմակերպելու համար՝ տրամադրվող հողերի կառուցապատման վճար սահմանել 1 քմ-ի համար 12.5 - 90 դրամ՝ ըստ հողերի գոտիականության սխեմաների.

- գյուղատնտեսական հողերի օգտագործման վճարը սահմանել 1 քմ-ի համար հողի հարկի դրույքաչափին հավասարեցված վարձավճար / 1քմ-1.88 դրամ /:

- արտադրական օբյեկտների կառուցման համար տրամադրվող հողերի վճար սահմանել 1 քմ-ի համար - 30 դրամ.

- կանաչապատման, բարեկարգման նպատակով տրամադրված հողի 1քմ-ի համար վարձավճար սահմանել տարեկան - 30 դրամ

Համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածքների վարձակալության մեկ քառակուսի մետրի համար ընթացիկ տարվա համար սահմանվում է - 200 դրամ.

ա) ոչ բնակելի տարածքների վարձակալության մեկ քառակուսի մետրի համար ընթացիկ տարվա համար - 2 000 դրամ.

բ) Գագարինում ոչ բնակելի տարածքների վարձակալության մեկ քառակուսի մետրի համար - 200 դրամ.

գ) ք.Սևան, Նաիրյան 164 հասցեում (քաղաքապետարանի վարչական շենքում ) ոչ բնակելի տարածքների վարձակալության մեկ քառակուսի մետրի համար ընթացիկ տարվա համար - 5 000 դրամ / բանակցությունների արդյունքում / :

3. Համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական և նկուղային տարածքների մեկ քառակուսի մետրի համար ընթացիկ տարվա համար - 200 դրամ.

4. Սահմանել, որ համայնքի ավագանու կողմից սույն որոշմամբ հաստատված հողօգտագործման վճարները համարվում են մրցույթի մեկնարկային գներ, ինչպես նաև առանց մրցույթի տրամադրման դեպքում՝ ուղղակի վարձակալության և կառուցապատման վճարներ :

5. Համայնքի տարածքում անշարժ գույքի հասցեավորման աշխատանքների ծառայության վճար - 1000 դրամ:

6. Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ հողային օրենսգրքի պահանջներով՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով՝ 621 դրամ, իսկ ուղղակի վաճառքի գին կադաստրային արժեքով - 1242 դրամ:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 55-Ա

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ,
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Համաձայն Սևան համայնքի գլխավոր հատակագծի և կառուցապատման սխեմայի, ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Համաձայնել քաղաքապետի առաջարկությանը և թույլատրել՝

1. Համայնքի սեփականություն համարվող արտադրական, բնակելի և հասարակական նշանակության հողերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու՝
   - Ցամաքաբերդ թաղամաս - 6.0հա
   - Կարմիր բանակի փողոցի սկզբնամաս - 1.6 հա
   - Ընդհանուր կառուցապատման - 1.5 հա
   - Շահումյան փողոցի սկզբնամաս - 0.8 հա
   - 4-րդ դպրոցի հարավային հատված - 0.5հա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 56-Ա

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԵՏ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

**Հիմք ընդունելով** ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10 / 12 / 2012թ. N 01 / 08 / 5205 գրությունը Սևան համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված հողատարածքը պետությանը հետ նվիրելու առաջարկությունը,

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

**Ք. Սևան,** Դեմիրճյան փողոց թիվ 10 հասցեում գտնվող վարչական շենքի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 4230քմ մակերեսով հողատարածքը հետ նվիրել պետությանը:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 57-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ /

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 2012թ. հոկտեմբերի 10-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգը,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում կատարելու յուրաքանչյուր դեպքի համար սահմանել - 20.000 դրամ վճար:

1. Սահմանել, որ վերը նշված դեպքերի համար լրացուցիչ վճարվող գումարի վճարումը կատարվում է համայնքի բյուջեի ՔԿԱԳ-ի համար նախատեսված տուրքի հաշվեհամարին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 58-Ա

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. **Զիջել ներքոհիշյալ քաղաքացիներին պատկանող փոխադրամիջոցների և շենք-շինությունների գույքահարկի պարտքերը / հարկ և տույժ /**

**Փոխադրամիջոցներ**

զիջում

- ✓ **Հայկ Ղուկասյան**- ՀՎՀՀ M0062834 - Նալբանդյան 3 - Range Rover 4.4 - **5625 դրամ** - 5625 դրամ
- ✓ **Աղվան Ղարիբյան** - ՀՎՀՀ 17488634 - Գրիբոյեդով 9 / 11 - Հունդիա Tucson2.7A - **39200 դրամ** - 39200 դրամ
- ✓ **Ալբերտ Գրիգորյան** - ՀՎՀՀ 17317707 - Ս.Սևանեցի 23 / 35 - Կրայսլեր Voyager - **20448 դրամ** - 20448 դրամ
- ✓ **Աշոտ Ասատրյան** - ՀՎՀՀ M0060187 - Սունդուկյան 12 - ԳԱԶ 2410 - **25330 դրամ** - 5540 դրամ
- ✓ **Արմեն Մաթևոսյան**- ՀՎՀՀ M0060764 - Նաիրյան 140 - ԳԱԶ 3110-121 - **54116 դրամ** - 11146 դրամ
  **28.11.2012**թ. դրությամբ
- ✓ Հայկարամ Պետրոսյան - ՀՎՀՀ 17419361 - Նաիրյան 175 / 1ա - ԲՄՎX4.4 - 76376 դրամ - 76376 դրամ
- ✓ Սմբատ Խաչատրյան - ՀՎՀՀ M0061950 - Գրիբոյեդով 12 / 28 - Օպել Վեկտրա - 11781 դրամ - 11781 դրամ
- ✓ Արամ Սարգսյան - ՀՎՀՀ M0062007 - Նաիրյան 139 / 14 - Մերսեդես-Բենց - 172319 դրամ - 38919 դրամ

**Շինություններ**

- ✓ Արտուշ Ղուկասյան - ՀՎՀՀ M0060676 - Նաիրյան - 976 դրամ - 976 դրամ
- ✓ Հայկ Ղուկասյան - ՀՎՀՀ M0062393 - Երևան -Սևան մայրուղի - 5036 դրամ - 5036 դրամ
  - ՀՎՀՀ M0060433 - Նաիրյան 156ա - 2762 դրամ - 2762 դրամ
- ✓ «Արտկա-տեքս» ՍՊԸ - ՀՎՀՀ 08614012 - Սևան համայնք - 104931 դրամ -104931 դրամ
- ✓ «Արարսկոնտրակտ» ՍՊԸ - ՀՎՀՀ 08610304 - Սևան համայնք - 118261 դրամ -118261 դրամ
- ✓ Վովա Մարտիրոսյան - ՀՎՀՀ 17486535 - Մարզպետունի - 14549 դրամ - 14549 դրամ
- ✓ Իշխան Ներսեսյան - ՀՎՀՀ 17347154 - Սևան հարավ Արևելյան - 13176 դրամ - 13176 դրամ
  - ՀՎՀՀ M0061841 - Խաղաղության 5ա - 11671 դրամ - 11671 դրամ
- ✓ «Լողափ Նաիրի» ՍՊԸ - ՀՎՀՀ 08411383 - Սևան համայնք - 1634417 դրամ -1634417դրամ
- ✓ Լեոնիդ Փանոսյան - ՀՎՀՀ 17487365 - Սունդուկյան 30 - 4314 դրամ - 4314 դրամ
- ✓ «Վիգեն» ՍՊԸ - ՀՎՀՀ 08600147 - Սևան համայնք - 56192 դրամ - 56192 դրամ
- ✓ «Գյուղտնտշինմոնտաժ թիվ 1» ՓԲԸ - ՀՎՀՀ 08607463 - Սևան համայնք - 67159 դրամ - 67159 դրամ
- ✓ Սուսաննա Հակոբյան - ՀՎՀՀ M0062367 - Կոմիսարների 75 - 13326 դրամ - 13326 դրամ

- ✓ **Ռազմիկ Կյուրեղյան** - ՀՎՀՀ M0060459 - Կ. Բանակ - 27869 **դրամ** - 12429 դրամ
- ✓ **Ֆելիքս Հովսեփյան** - ՀՎՀՀ 17338093 - Կ. Բանակ 9 - 25553 **դրամ** - 9148 դրամ
- ✓ **Կարեն Պետրոսյան** - ՀՎՀՀ M0060105 - Ս. Նովա և Նաիրյան խաչմերուկ - 39852 **դրամ** - 39852 դրամ
- ✓ **Անուշկա Խալաֆյան** - ՀՎՀՀ 17411988 - Իսահակյան 27 - 1842 **դրամ** - 1412 դրամ
- ✓ **Անահիտ Հովհաննիսյան** - ՀՎՀՀ M0061124 - Մյասնիկյան 51 - 63004 **դրամ** - 63004 դրամ
- ✓ **Գարիկ Խաչատրյան** - ՀՎՀՀ M0060743 -Կենտրոն. հիվանդ. հարևան. - 130936 **դրամ** -130936 դրամ
- ✓ **Մարինա Միրզոյան** - ՀՎՀՀ M0060644 - Ավտոկայանի շենք - 269478 **դրամ** - 114000 դրամ
  **/ տարածքի վարձակալության վճար /**
- ✓ **«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ**
  **Սևանի տարածքային մասնաճյուղ** - ՀՎՀՀ 00006023 - Նաիրյան 164 - 142500 **դրամ** - 142500 դրամ

2. Որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻՋԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2012 թվականի N 59-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ / ՆՎԻՐԵԼՈՒ / ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ /

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ներքոհիշյալ քաղաքացիներին անհատույց սեփականության իրավունքով տրամադրել / նվիրել / իրենց կողմից զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները՝
   - ✓ Սվետլանա Արզումանյան - գ. Գագարին, Շիրազ 19ա
   - ✓ Գարիկ Սաղաթելյան - գ. Գագարին, Երիտասարդական 8 / 10
   - ✓ Ջեմմա Սարգսյան - գ. Գագարին, Ս. Սևանեցի 24 / 2
2. Որոշումն ուժի մեջ է բնակարանների անհատույց սեփականության իրավունքով տրամադրման պայմանագրերի կնքումից և պետական գրանցում ստանալուց հետո:

Կողմ 13 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2012 թվականի N 45-Ա

Հարցման կարգով

## ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի Իզեր նահանգում կազմակերպվող «Հայաստանում կայուն զարգացմանը նվիրված միջազգային ֆորում»-ին մասնակցելու նպատակով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Սևանի քաղաքապետ Ռուդիկ Ղուկասյանին ս / թ դեկտեմբերի 10-17-ը գործուղել Ֆրանսիա:

Աշխատավարձը՝ համաձայն հաստատված հաստիքացուցակի՝ 240.000 դրամ:

Կողմ 15 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
11. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
12. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
14. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
15. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2012 թվականի N 46-Ա

Հարցման կարգով

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՒ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի և ջրահեռացման / կոյուղու/ համակարգերը մինչև 2035թ. հուլիսի 1-ը ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագրով հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Քաղաքապետին՝
   - ✓ Սահմանված կարգով ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը / պայմանագրերը / կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Կողմ 15 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
10. ՍԱՀԱԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ
11. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
12. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
14. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
15. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ